

կառնեն և կոկելով կոշկակարներուն կրծախեն : Արսեն թէ պօսյին միսն ալ շատ համեղ է, և որսորդները պատառ պատառ կրկտրեն՝ կրծախեն . եղն ալ շատ օգտակար է վերքերու, և մանաւանդ զարնուածքի :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Վոյեմբեր ամսու մէջ երկրագործին դարպակահանքն ընելիք :

Այս ամսուս մէջ բնութիւնը իր գեղեցկութիւնը կրկորսընցնէ, երկրագործին աշխատանքներուն մեծ մասն ալ կը լընայ . միայն կը մնայ անտառներուն փայտերը կտրել՝ թէ չէնքի և թէ վառելու համար : Արտերուն մէջ պէտք է կաւ և ուրիշ հողեր խառնել . և թէ որ արտը դար վար տեղ չէ, կրնաս խոր հերկել, որ պէս զի ձմեռուան սառոյցը հողերը փշրէ : Վայելու է որ աս ամսուան մէջ լընայ՝ թէ ցորենի և թէ ուրիշ արմատիքներու ցանքը, և ցանելէն ետքը վրանին բարակ կարգ մը պարարտութիւն դնելը շատ աղէկ է : Պէտք է նայիլ որ կորիներ ու ջրի ճամբաներ բացուին, որպէս զի ձմեռուան ջրերը արտերուն մէջ չմընան . ապա թէ ոչ՝ գարնան ուշ կը տաքնան ու բերքը ուշ կը հասցնեն : Վանկառններուն արմատը հողով ծածկելու է որ չսառին . իսկ ստեպղինը՝, բողկը՝, ճակնդեղը՝, շողգամն ու գետնախնձորը և ուրիշ աս տեսակ արմատները պէտք է հանել, ու գոց տեղ մը բլրի պէս դիզելէն ետքը՝ վրան յարդով ծածկել, որպէս զի ցրտէն չկարծրնան : Ենչուան ամսուս կէսը որ թերը կըրնան յօտուիլ, անկէ ետքը ֆսասակար է : Արթերն ու թթենիները

1 Հալած :
2 Թորի :

3 Բանձար :
4 Քելեկէնի :

գարնան տնկելու համար հիմակուց անոնց փոսերը պատրաստելու է . ձի-թապտուղն՝ ալ սովորաբար աս ամսուս մէջ կը ժողվեն . բայց ոմանք դեռ կը թողուն :

Թէ որ ձիերը աս ամսուս մէջ չաշխատցնես, կրնաս անոնց ուտելիքը քիչ մը պակաս տալ : Վերմանացի վարպետ երկրագործները սովորութիւն մը ունին որ աս ամսուս մէջ ամէն շաբաթ իրենց ձիուն ասանկ խառնուրդ մը կրկերցնեն . այսինքն քիչ մը աղ, կաղնիի՝ կեղև, գիհիի՝ հունտ ու օշինդր՝, բոլորը մէկէն ծեծած ու խառնած . և կըսեն թէ ձին ասով շատ ուժ կառնէ ու առողջ կը մնայ :

Ազներն ու կովերը որ գիրնալու համար չեն՝ պէտք չէ թողուլ որ կանաչ խոտ ուտեն, հասա կամ բոյսի արմատներ, ինչպէս ստեպղին, շողգամ և այլն, և կամ պարզ յարդ : Արեւելի երկրագործին մէկը ասանկ դիտողութիւն մը ըրեր է, որ երբոր կովուն խմելիքին մէջ քիչ մը ալիւր քիչ մըն ալ աղ խառնես ու գաղջ տաս աւելի ախորժելով ու շատ կը խմէ, կաթն ալ կը շատնայ :

Նանակելու ոչխարներուն աղէկ ու սննդարար կերակուր տալու է, ինչպէս են ճակնդեղը, գետնախնձորը, աղէկ խոտն ու արմտիքը . նմանապէս նայելու որ խմելիքին չպակսի . և որչափ կարելի է՝ փարախին ու ախոռին օդը փոխելու ու նորոգելու է՝ ստէպ ստէպ պատուհանները բանալով :

Պտղատու և վայրի ծառերը երբեմն երբեմն թօթվելու է որ տերևները թափւորին . ասոնք շատ բանի կրնան գալ, ինչպէս անցեալ ամսուան մէջ ըսինք : Տկար ու հին ծառերը կտրելու է, մատղաշներուն վըրայէն ալ մամուռները մաքրելու է կըրծով լուալով :

Կաղիկ պահողը վարդերը տաշտաթաղ ընէ . բայց թէ որ վարդենին

1 Զէյթն :
2 Մեշ :
3 Արդա :

4 Փէլն օխո :
5 Բլեշգ :
6 Քիւրեճ սոյոն :

շատ հին է՝ պէտք է հողին հաւասար կտրէ կամ կրակով այրէ . ասով հին բուսեցող կրփճանան , և գարնան նոյն արմատէն աւելի աղուոր ու մատ . զաշ ճիւղեր՝ կուտան որ խիստ աղէկ կը ծաղկին . խոշոր կակաչները՝ հողէն հանելու ու արմատը բաժնելու , ետքը պարարտ հողի մէջ տնկելու է որ մեծնան . տաշտաթաղ ըրած մեխակներն ալ հարաւային կողմը տաքուկ տեղ մը դնելու է :

Պարտէզի ծառերուն պտուղները խոշորանէրուն յետքէն պահելու հնարք :

Ի ՈՆՏՐԱՅԻ պարտիզպանական ընկերութիւնը փորձով տեսեր է մօտ տարիներս , որ պարտէզի պտուղները թռչուններուն փնասէն ազատելու համար շատ աղէկ հնարք է՝ կատուները ծառերուն պահպան դնելը . վասն զի պարտիզպանին մէկը չորս հինգ կատուով բոլոր իր պարտէզը կը պահպանէ եղեր թռչուններէն շատ տարիներէ ՚ի վեր :

Լձէն մէկ կատուին վիզը մէյմէկ օղակով՝ շղթայ՝ անցուցած է . երբոր պտուղները կը հասունան , ծառին մօտ ցից՝ մը կը տնկէ , ու շղթային ծայրը անոր կանցընէ , կատուին կերակուրը՝ ջուրն ու բնակարանն ալ քովը կը պատրաստէ . ասով թռչունները ամենեւին չեն կրնար մօտենալ ծառին : Ուրիշ անգղիացի պարտիզպան մը ուզելով որ միայն մէկ երկու կատուով մեծ երկիր մը պահպանէ , երկու ցից տնկեր է իրարմէ շատ հեռու , և ան ցիցերէն իրարու չուն մը ձգեր է , չունին վրայ ալ անցուցեր է կատուին շղթան . ասով մէկ երկու կատու բաւական կը լլան եղեր մեծ երկիր մը պահպանելու : Եւ բանս ուրիշներն ալ փորձեցին ու շատ աղէկ յաջողեցաւ :

1 Ընդ :

2 Ընդայից :

3 Հալի :

4 Զիւժի :

5 Գաւազ :

Եւրոպայի ԳՂ եղած Բոյսերուն Թիւը :

ՀԻՄԱԿՈՒԱՆ Եւրոպայի երեւելի բնագէտներէն մէկը հաշիւ ըրեր է , որ Լձերիկայի գտնուելէն վերջը անկէ 2343 տեսակ բոյս եկեր է Եւրոպա . Բարեյուսոյ գլխէն 1700 . նոյն չափ մըն ալ եկած է Չինու երկրէն , արեւելեան Հնդկաստանէն , նոր Հուլանտայէն , Լիւիային ու Լիւիսիանային այլալ կողմերէն . և ասոնք ամէնը մէկէն 120,000 տեսակէն աւելի են կրսէ :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Լձիք :

ՍԻՂԻՆ գարու սկիզբներէն ինչուն վերջերը խիստ խորունկ ու խորհրդաւոր արհեստ կամ գիտութիւն սեպուած էր ալքիմիա՝ ըսուածը : Լիւիկայ քիմիական արհեստին կամ բնալուծութեան բարակն է կրսէին ետեւ ինքողները . և ինչուն հիմա արեւելք կը գտնուին աս գիտութիւն պարծեցողներ : Լձիքի միայն վախճանն է մէյմը՝ ոսկի շինել . անոր համար ոմանք ոսկեգործութիւն ալ գըրեր են անունը . երկրորդ՝ գեղ մը շինելու ամէն հիւանդութեց ճար ըլլայ . երրորդ՝ այնպիսի նիւթ մը գտնել որ ամէն բան լուծէ . չորրորդ՝ այնպիսի խմոր մը գտնել որ ինչ բանի որ գըրայի՝ իւրաքանչեւ քաւ ըսուածը հանէ : Մէկ քանի առասպելաբան պատմիչներու խօսքին նայելով՝ ալքիմիան՝ Լոյի ատենն ալ գիտցող կայ եղեր :

1 Ալիք բառին ստուգաբանութիւնը յայտնի չէ , ոմանք կրսեն թէ յունաց Χημεία (քիմիա) բառն է՝ արաբացուց ալ կամել մասնիկովը բաղադրած , բայց ուրիշները կրսեն թէ աս ալքիմիա բառը արաբացուց ծաղկելէն առաջ ալ գրոց մէջ յիշուած ըլլալով , եգիպտական բառ կրնայ ըլլալ :